

այս համառոտագիրը²¹, զարմանալի կերպով զանց ըրած է յառաջ բերել համառոտագրին դրութեան թուականը: Բարեբախտաբար աւանդած է զայն մեղի Relatio brevis²²: Այս դրուածքին անանուն հեղինակը յիշելով Հայոց կաթողիկոսի եւ Ս. Աթոռին մէջ փոխանակուած թղթակցութիւնները, կը գրէ. «Մեղքիսեղեկ Մեծաց Հայոց կաթողիկոսը, որ անցեալ տարի ի Կամենից վախճանեցաւ, երկու թուղթ գրեց առ Պօղոս Ե. միութեան խնդրոյ մասին, մատուցանելով անոր իր հնազանդութիւնը: Առաջինը գրուած է 1610ին, երկրորդը՝ 1613, Մարտ 22ին: Երկուքին ալ պատասխանեց Մեծ Քահանայապետը. առաջինոյն՝ ի ձեռն Զաքարիա Հայոց վարդապետին, որ կաթողիկոսին նուիրակն էր, 1612ին, Ը. Կաղանդից Ապրիլի (25 Մարտ), որուն ուղարկեց նաեւ Ս. Խաչի մասունք, ոսկի տուփի մէջ զետեղուած, եւ խորանի վերաբերեալ հանդերձներ: Երկրորդին պատասխանեց 1615ին, Ե. Կաղանդիցն Յունիսի (28 Մայիս): Այս թուղթերու եւ համառոտագիրներու վաւերական օրինակները կը գտնուին Հայոց Գեր. Արքեպիսկոպոսի քով» (ի Լվով):

Որչափ ալ կը գանգատէր Մեղքիսեղեկ, թէ չըջապատուած է լրտեսներէ, որոնք մանր կը դիտեն իր շարժումներն, այս պատճառաւ ալ ստիպուած է ամենայն ինչ ի ծածուկ գործել, բայց եւ այնպէս, ինչպէս կ'երեւայ, ի Հոռոմ

²¹ Bzovius, Pontifex Romanus, էջ 208—210.

²² Propaganda, 293 (Armeni), f. 210.